

ՏԻԳՐԱՆ ՆԱԴԴԱԼՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հոդվածում միջազգային փորձի ուսումնասիրության լույսի ներքո ներկայացվում է պաշտպանության և անվտանգության բնագավառների խորհրդարանական վերահսկողության մի շարք արդիական հիմնահարցեր: Մասնավորապես, քննարկման առարկա են դարձվում նշված ոլորտներում ստեղծված քննիչ հանձնաժողովի գործունեության և զեկույցի քննարկման վերաբերյալ առկա օրենսդրական կանոնակարգումների կատարելագործումը, ինչպես նաև՝ զինված ուժերի և անվտանգության ծառայությունների նկատմամբ իրականացվող քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողությանն առնչվող հարցերը:

Իրականացված վերլուծության հիման վրա հիմնավորվում է վերոնշյալ հարցերի վերաբերյալ ինչպես ՀՀ սահմանադրությունում, այնպես էլ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում՝ մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը:

Հիմնարարներ – պաշտպանության և անվտանգության բնագավառներ, խորհրդարանական վերահսկողություն, քննիչ հանձնաժողովի զեկույց, քաղաքական չեզոքության սկզբունք, ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողություն:

Բազմաթիվ զարգացած պետությունների օրինակը վկայում է, որ ժողովրդավարական կառավարումն ու խորհրդարանական վերահսկողության կառուցակարգերը պաշտպանության և անվտանգության բնագավառներին են հասնում շատ ավելի ուշ՝ պետության այլ ոլորտներում արդեն իսկ հաջողությամբ կայանալուց հետո :

Անվիճելի է, որ մի կողմից պաշտպանության և անվտանգության ոլորտների զգալի հատվածներ պետք է գաղտնի պահվեն, սակայն մյուս կողմից էլ գաղտնիությունը խանգարում է լիարժեք հաշվետվողականությանն ու թափանցիկությանը և պարարտ հող նախապատրաստում պաշտոնեական դիրքի չարաշահման, ապօրինությունների և անպատժելիության համար: Հենց այս դիտանկյունից էլ 20-րդ դարի երկրորդ կեսերից սկսած ակտիվ քննարկվում էր այն հարցը, թե արդյո՞ք վերահսկողություն պետք է իրականացվի անվտանգության ծառայությունների, զինված ուժերի և իրավապահ մարմինների նկատմամբ: Արդյունքում՝ հետագոտողների մոտեցումները հիմնականում հանգեցին նրան, որ ժողովրդավարական և իրավական պետության կայացման ճանապարհին խիստ անհրաժեշտ է, որպեսզի հիշյալ ոլորտները ևս ենթարկվեն արտաքին վերահսկողության՝ ի դեմս խորհրդարան-

ական վերահսկողության²:

Նկատենք, որ պետությունները ստեղծում են պաշտպանության և անվտանգության բնագավառի խորհրդարանական վերահսկողության համակարգեր՝ հիմնականում նպատակ հետապնդելով նշված ոլորտներում.

- ա) պաշտպանել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները,
- բ) ամրապնդել պաշտպանության և անվտանգության մարմինների ժողովրդավարական կառավարումը,
- գ) պահպանել իրավունքի գերակայության սկզբունքը,
- դ) ապահովել հաշվետվողականությունն ու թափանցիկությունը,
- ե) նպաստել իրավասու մարմինների աշխատանքի արդյունավետությանը³:

Կարելի է համաձայնել մասնագիտական գրականության մեջ արտահայտված այն կարծիքի հետ, որ խորհրդարանական վերահսկողությունը պաշտպանության և անվտանգության ոլորտների նկատմամբ որոշ դեպքերում անհրաժեշտ է հենց այդ բնագավառների համար պատասխանատու պետական կառավարման մարմինների համար, քանի որ վերջիններիս գործունեությունը ձեռք է բե-

րում լեգիտիմ բնույթ⁴: Սա առավելապես վերաբերում է այն իրավիճակներին, երբ որևէ գործողություն կատարելու համար այս մարմինները պարտադիր պետք է ստանան խորհրդարանի համապատասխան հանձնաժողովի համաձայնությունը⁵:

ՀՀ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանության, ազգային անվտանգության և իրավապահ մարմիններին առնչվող տեղեկություններն առավել հաճախ վերաբերում են այդ ոլորտներում առկա այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ մարդու իրավունքների խախտումները, հանցավորության դեմ իրականացվող ոչ արդյունավետ պայքարը, պաշտոնատար անձանց չարաշահումներն ու կոռուպցիոն դրսևորումները⁶: Սա վկայում է այն բանի մասին, որ մերօրյա պայմաններում հիշյալ մարմինների աշխատանքն առավել քան երբևէ՝ գտնվում է հանրության ուշադրության կենտրոնում, իսկ այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում⁷ կարմիր թելի պես ընդգծված է իրավունքի գերակայության սկզբունքը, ինչպես նաև շեշտադրված է պետական իշխանության մարմինների համակարգում խորհրդարանի դերի բարձրացումը՝ ողջամտորեն թելադրում է նշված բնագավառներում ևս խորհրդարանական վերահսկողության առումով համակարգային նոր մոտեցումների և կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությունը:

Մինչդեռ, հարկ է ընդգծել, որ 2015 թվականի⁸ ՀՀ սահմանադրական փոփոխություններով պաշտպանության և անվտանգության ոլորտների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության տեսանկյունից միակ նորույթը ՀՀ սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն)⁹ 108-րդ հոդվածով (4-րդ մաս) նախատեսված իրավադրույթն է առ այն, որ պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի լիազորություններ կարող է իրականացնել միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը: Ստացվում է, որ մեր պետության համար առանձնակի կարևորություն ունեցող այս բնագավառներում հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու իրավասությունը սահմանադրական վկայակոչված նորմի ուժով տրված է Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովին, ինչը համահունչ է արտասահմանյան երկրների սահմանադրական զարգացումներին¹⁰: Ընդ որում, ի տարբերություն

մյուս ոլորտներում ձևավորվող քննիչ հանձնաժողովների (քննիչ հանձնաժողով ստեղծվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով)¹¹, նշված մշտական հանձնաժողովը կարող է գործել որպես քննիչ հանձնաժողով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով¹²: Նման ոլորտներում խորհրդարանական հետաքննություններ նախաձեռնելու համար սահմանված ավելի բարձր շեմը նպատակ է հետապնդում Ազգային ժողովում ապահովել պահանջ ներկայացնող քաղաքական ուժերի առավել լայն աջակցություն¹³:

Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովների աշխատանքի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից մտահոգիչ է, սակայն, Սահմանադրության 108-րդ հոդվածում (5-րդ մաս) առկա կարգավորումը, ըստ որի՝ քննիչ հանձնաժողովների գործունեության մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով: Այս նորմի տառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ քննիչ հանձնաժողովների (այդ թվում՝ պաշտպանության և անվտանգության ոլորտներին վերաբերող հարցերի պարզման նպատակով ստեղծված) գործունեության կազմակերպմանն առնչվող ցանկացած իրավահարաբերություն պետք է տեղ գտնի բացառապես Ազգային ժողովի կանոնակարգում:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ արտասահմանյան սահմանադրական իրավունքի պրակտիկայում նշվածի վերաբերյալ միանգամայն այլ լուծումներ են գործում: Բանն այն է, որ բազմաթիվ երկրների ինչպես սահմանադրություններում, այնպես էլ պառլամենտների կանոնակարգերում առավել ընդհանրական ձևով են կարգավորվում քննիչ հանձնաժողովների ինստիտուտին վերաբերող հարցերը: Դրանցում հիմնականում անդրադարձ են կատարվում քննիչ հանձնաժողովների ստեղծման վավերապայմաններին ու քննության ենթակա հարցերի շրջանակին, իսկ քննության կազմակերպման ողջ գործընթացի մանրամասները կանոնակարգվում են առանձին օրենքներով¹⁴: Ընդ որում, բավականին տարածված է առանձին օրենքի մակարդակով նաև պաշտպանության և անվտանգության ոլորտների նկատմամբ խորհրդարանական վերահսկողությանը վերաբերող հարաբերությունների կարգավորումը¹⁵: Պատճառն այն է, որ այս բնագավառներում, պայմանավորված մի շարք առանձնահատկություններով (իրականացվող քաղաքականության գաղտնիության մակարդակ, մարդու իրավունքների հետ կապված խախտումների և կամա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յական գործողությունների վտանգ և այլն), միանգամայն այլ իրավական ռեժիմներ են գործում:

Ինչ վերաբերում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքին, ապա կարող ենք փաստել, որ դրանով անհասկանալի կերպով միատեսակ մոտեցում է ցուցաբերվել քննիչ հանձնաժողովների գործունեության կազմակերպմանը՝ որևէ առանձնահատուկ կարգավորում չնախատեսելով պաշտպանության և անվտանգության ոլորտներում: Մասնավորապես, նույն կարգավորումներն են գործում անգամ Ազգային ժողովի նիստում այս բնագավառներում ստեղծված քննիչ հանձնաժողովի զեկույցի քննարկման վերաբերյալ այն դեպքում, երբ այդ զեկույցը շատ դեպքերում կարող է պարունակել պետական գաղտնիք կազմող տեղեկություններ: Այսպես, Կանոնակարգի 25-րդ հոդվածի (4-րդ մաս) համաձայն՝ զեկույցն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում: Ընդ որում, ինչպես մյուս, այնպես էլ պաշտպանության և անվտանգության ոլորտներում քննիչ հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը, ինչպես նաև դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ հանձնաժողովի եզրահանգումները տեղ են գտնում Ազգային ժողովի նախագահին ներկայացվող զեկույցում, որը խորհրդարանի լիազուսար նիստում քննարկվում է ընդհանուր կարգով:

Ինչպես տեսնում ենք, Կանոնակարգում որևէ նշում չկա այն բանի մասին, թե պաշտպանության և անվտանգության հարցերով քննիչ հանձնաժողովի կազմած զեկույցը ինչ ռեժիմով պետք է քննարկվի: Մեր կարծիքով, խնդրո առարկա հարցի վերաբերյալ պետք է Կանոնակարգով տարբերակված մոտեցում ցուցաբերել և այն դեպքերում, երբ քննիչ հանձնաժողովի զեկույցը բովանդակում է պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ, ապա զեկույցն այդ մասով պետք է քննարկվի Ազգային ժողովի փակ նիստում:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ քննիչ հանձնաժողովի զեկույցի այն հատվածները, որոնք կապված չեն պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման հետ, խորհրդարանի կողմից պետք է քննարկվեն դռնբաց, հակառակ դեպքում՝ էապես կարող է նվազել հանրության վստահությունը խորհրդարանական հետաքննության և դրանով իսկ պաշտպանության ու անվտանգության գերատեսչությունների նկատմամբ:

Բացի այդ, մեր համոզմամբ, օրենսդիրը պետք

է քննիչ հանձնաժողովի իրավական ինստիտուտը կանոնակարգելիս պաշտպանության և անվտանգության ոլորտների համար առանձնահատուկ կերպով որոշի, թե ինչ կառուցակարգերի ներդրմամբ է հնարավոր ողջամիտ հավասարակշռության բերել հանձնաժողովի աշխատանքի գաղտնիության և թափանցիկության ու հասարակայնության համար մատչելիության միջև առկա շահերի բախումները:

Վերը շարադրված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ օրենսդիրը պատշաճ ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ պաշտպանության և անվտանգության ոլորտների նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունն էական առանձնահատկություններով է աչքի ընկնում և արդյունքում Կանոնակարգով միատեսակ մոտեցում է ցուցաբերել վերահսկողությանն առնչվող բոլոր հարցերի նկատմամբ: Մեր համոզմամբ, հիմնավորված կարող է համարվել միայն այնպիսի իրավակարգավորումը, որի պարագայում նախ Սահմանադրության մակարդակով շեշտադրում արվի պաշտպանության և անվտանգության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը՝ առանձին նորմ բովանդակելով վերահսկողության շրջանակների մասին: Բացի այդ, անհրաժեշտ է Սահմանադրության 108-րդ հոդվածում (5-րդ մաս) կատարել լրացում՝ սահմանելով, որ քննիչ հանձնաժողովների գործունեության մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով և օրենքով: Նման կարգավորման պայմաններում միայն հնարավոր կլինի պաշտպանության և անվտանգության ոլորտների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ելակետային դրույթներն իրենց բնորոշ առանձնահատուկ բովանդակությամբ նախատեսել Սահմանադրությամբ և Կանոնակարգով, իսկ վերահսկողական գործունեության կազմակերպման մանրամասները համապարփակ կերպով ամրագրել առանձին օրենսդրական ակտով:

Հանրահայտ է, որ անվտանգության մարմիններին օրենսդրությամբ վերապահվում են լայն լիազորություններ գաղտնի տեղեկություններ ձեռք բերելու, հաղորդակցությունների գաղտնալսման և անձի մասնավոր կյանքին միջամտող այլ գործողություններ կատարելու համար, որոնք պետք է ուղղված լինեն ազգային անվտանգության սպառնալիքների դեմ պայքարին: Սակայն այս մարմինները որոշ դեպքերում կարող են չարաշահել իրենց լիազորությունները՝ խախտելով մարդու իրավունքները, միջամտելով քաղաքական գործընթացներին և այլն¹⁶: Այս առումով հարկ է նկատել, որ թեպես

կառավարության համապատասխան պաշտոնյաները մեծապես շահագրգռված են, որ պաշտպանության և անվտանգության ոլորտներում ձախողումներ չլինեն, սակայն նրանք նույնչափ շահագրգռված չեն ձախողումները բացահայտելու հարցում, երբ այդպիսիք տեղի են ունենում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ոլորտում անհաջողությունների կամ թերությունների հրապարակումը կարող է առաջացնել քաղաքական առումով բացասական հետևանքներ:

Վերոգրյալի համատեքստում առանձին կարևորություն է ձեռք բերում այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք անվտանգության մարմինների նկատմամբ նույնպես պետք է իրականացվի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողություն: Հարկ է նշել, որ Սահմանադրության 14-րդ հոդվածում (2-րդ մաս)¹⁷ ամրագրված են միայն զինված ուժերի քաղաքական չեզոքության և քաղաքացիական վերահսկողության սկզբունքները: Առաջին սկզբունքի էությունն այն է, որ զինված ուժերը պարտավոր են չմասնակցել քաղաքական պայքարին և չմիջամտել քաղաքական գործընթացներին, ինչի երաշխիք կարող է լինել զինված ուժերի ողջ համակարգի ապաքաղաքականացումը¹⁸: Դրանով նպատակ է հետապնդվում զինված ուժերը դուրս բերել քաղաքականության ակտիվներգործության շրջանակից և, ամենից առաջ՝ այս կամ այն կուսակցության քաղաքական ազդեցությունից:

Ակներև է, որ քաղաքական չեզոքության սկզբունքը ներգործություն է ունեցել ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենսդրական իրավանորմերում²⁰ առկա մի շարք կանոնակարգումների վրա: Մասնավորապես, ըստ Սահմանադրության 46-րդ հոդվածի (2-րդ մաս)՝ օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ: Բացի այդ, ՀՀ ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենք) 19-րդ հոդվածում (5-րդ մաս)²¹ ի թիվս այլ սուբյեկտների արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել զինծառայողներին, ինչպես նաև՝ ոստիկանությունում և ազգային անվտանգության ծառայությունում՝ ծառայողներին:

Ինչպես տեսնում ենք, թեև Սահմանադրության 14-րդ հոդվածում (2-րդ մաս) քաղաքական չեզոքության սկզբունքը սահմանվել է միայն զինված ուժերի նկատմամբ, սակայն ինչպես Սահմանադրու-

թյան հետագա դրույթներում, այնպես էլ մի շարք օրենսդրական ակտերում նշված սկզբունքն ամբողջ ծավալով տարածվել է նաև ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմինների վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ, մեր կարծիքով, անհրաժեշտ է Սահմանադրության նշված հոդվածում (2-րդ մաս) քաղաքական չեզոքության սկզբունքն ամրագրել ոչ միայն զինված ուժերի, այլև ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմինների նկատմամբ, ինչն առավել ամբողջական կարտահայտի հիշյալ սկզբունքի գործողության սահմանադրաիրավական շրջանակները:

Ինչ վերաբերում է զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության սկզբունքին, ապա հարկ է նշել, որ ինչպես մասնագիտական գրականության²², այնպես էլ մի շարք երկրների տարբեր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի²³ մեջ քննարկվող սկզբունքի հետ մեկտեղ օգտագործվում է նաև «ժողովրդավարական վերահսկողություն» եզրույթը: Այս առումով, հիշատակման է արժանի Ա.Ջ. Գուդիասերի և Ս.Ֆ. Հանթինգթոնի²⁴ տեսակետն առ այն, որ քաղաքացիական-զինվորական հարաբերությունների մարտահրավերի հիմնական էությունը հետևյալն է. զինվորականները պետք է միևնույն ժամանակ լինեն և՛ բավականաչափ ուժեղ՝ քաղաքացիական հասարակության բոլոր պահանջները կատարելու համար, և՛ բավականաչափ հնազանդ, որպեսզի կատարեն միայն այն, ինչի համար լիազորված են վերջիններիս կողմից: Նկատենք, որ արդի աշխարհում գործում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական մոդելը, ինչը խարսխված է քաղաքական համակարգի սուբյեկտների և զինված ուժերի լիազորությունների կոշտ սահմանազատման վրա: Հասարակության մեջ հաստատված է փոխհամաձայնություն, ըստ որի՝ քաղաքականությունը զինվորականների զբաղմունքը չէ՝:

Հետաքրքրական է նաև Կ. ֆոն Կլաուզևիչի հայտնած այն տեսակետը, որ քաղաքացիական վերահսկողությունը զինված ուժերի և հատուկ ծառայությունների պատշաճ ենթակայությունն է քաղաքականության միջոցներին, որոնք սահմանվում են օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների կողմից: Այս գործընթացի վրա անմիջական և միջնորդավորված ձևերով իրենց մեծ ազդեցությունն ունեն նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները²⁶:

Ջ.Ռ. Կլեմմենսենն իր դոկտորական ատենա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խոսության մեջ, անդրադառնալով քաղաքացիական վերահսկողության մի շարք առանցքային հիմնախնդիրների, քննադատում է վերահսկողության այս տեսակի բովանդակության բացահայտման վերաբերյալ կարծիքներ արտահայտած հեղինակներին այն առումով, որ նրանց վերլուծությունները միակողմանի են և մի դեպքում քաղաքացիական վերահսկողությունը նույնացնում են արտաքին, իսկ մյուս դեպքում՝ ներքին վերահսկողությանը: Այս առումով պետք է համաձայնել գիտնականի այն պնդման հետ, որ քաղաքացիական վերահսկողությունն իր մեջ ներառում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին վերահսկողական որոշ կառուցակարգեր²⁷:

Վենետիկի հանձնաժողովը «Զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մասին» 2008 թվականի գեկույցում²⁸ և անդրադարձել է «քաղաքացիական վերահսկողություն» և «ժողովրդավարական վերահսկողություն» հասկացություններին՝ նշելով, որ ժողովրդավարական վերահսկողությունն ենթադրում է ժողովրդավարական ճանապարհով ընտրված այնպիսի մարմնի առկայություն, որն ունակ լինի վերահսկելու պաշտպանության և անվտանգության ոլորտներում իրավասու մարմինների որոշումները: Եթե քաղաքացիական վերահսկողությունն ինքնին չի ենթադրում ժողովրդավարական վերահսկողություն, ապա ժողովրդավարական վերահսկողությունը ներառում է քաղաքացիական վերահսկողության տարրեր²⁹: Ավելին, ինչպես իրավագիտորեն նշում է Ա.Ռ. Հարությունյանը՝ նշված ոլորտները կարող են լինել քաղաքացիական վերահսկողության տակ և, այդուհանդերձ, ունենան ժողովրդավարական վերահսկողության հետ կապված բազմաթիվ խնդիրներ³⁰:

Հիշյալ հասկացություններն իրենց արտացոլումն են գտել նաև եվրոպական մի շարք երկրների սահմանադրություններում: Այսպես, Խորվաթիայի սահմանադրության 7-րդ հոդվածում սահմանված է, որ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը պետք է կանոնակարգվի սահմանադրությամբ և օրենքով, իսկ 80-րդ հոդվածում ամրագրված է, որ զինված ուժերի և անվտանգության ծառայությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնում է Խորվաթիայի պառլամենտի Ներկայացուցիչների պալատը³¹: Ըստ Լեհաստանի սահմանադրության 26-րդ հոդվածի՝ զինված ուժերը պետք է գտնվեն քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողության ներքո և քաղաքական հարցերում ցուցաբերեն չեզոքություն³²: Պորտուգալիայի սահմա-

նադրության 275-րդ հոդվածում ևս ընդգծված են զինված ուժերի ապաքաղաքական լինելու և սահմանադրությանն ու օրենքին համապատասխան՝ իրավասու մարմիններին ենթակա լինելու հանգամանքները³³:

Սահմանադրական քննարկվող սկզբունքին համահունչ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի³⁴ 4-րդ հոդվածով (1-ին մաս) նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է ի թիվս այլ սկզբունքների՝ նաև զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիման վրա, իսկ ՀՀ նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագրում³⁵ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունը հետևողական է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների ապահովման խնդրում:

Նկատենք, որ վերոգրյալ իրավական ակտերից բացի, զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության հիմնադրույթների մասին խոսք չի գնում նաև ՀՀ նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» ՆՀ-308-Ն հրամանագրում³⁶, մինչդեռ՝ Հայաստան-ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների (2014-2016թթ.)»³⁷ ծրագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է զարգացնել և ամրապնդել զինված ուժերի ոչ միայն քաղաքացիական, այլև ժողովրդավարական վերահսկողությունը: Այդ առումով ուշադրության է արժանի ծրագրային այն դրույթը, որով կարևորվում է պաշտպանության և անվտանգության բնագավառների խորհրդարանական արդյունավետ ու թափանցիկ վերահսկողության զարգացումը: Նշված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը հետևողական ջանքեր պետք է գործադրի պաշտպանական գործունեության վերահսկողության գործընթացում հնարավորինս բարձրացնելու օրենսդիր մարմնի դերը՝ բարելավելով Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների կարողություններն ու գործունեությունը: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը պարտականություն է ստանձնել իրականացնելու պաշտպանու-

թյան և անվտանգության ոլորտների խորհրդարանական վերահսկողության ընդլայնմանն ու արդյունավետությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ, այդ թվում՝ գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնյաների հետ խորհրդակցություններ, պաշտպանական և անվտանգության ոլորտի հաստատություններ այցեր, խորհրդարանական լսումներ, բյուջետային խորացված քննարկումներ:

Անփոփելով ներկայացված վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ պաշտպանության և անվտանգության բնագավառների քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է պետության պաշտպանությանը և անվտանգությանը վերաբերող բոլոր կարևոր որոշումների կայացում՝ քաղաքացիական իշխանության կողմից: Բացի այդ, վերահսկողության այս տեսակը նպատակ է հետապնդում սպահովել զինված ուժերի քաղաքական չեզոքությունն ու զսպվածությունը:

Ինչ վերաբերում է ժողովրդավարական վերահսկողությանը, ապա հարկ է ընդգծել, որ այն թեև պարունակում է քաղաքացիական վերահսկողությանը բնորոշ մի շարք տարրեր, սակայն առա-

վելապես հանգում է ժողովրդի անմիջական կամահայտնությամբ ձևավորված խորհրդարանի կողմից իրականացվող վերահսկողությանը:

Հիմք ընդունելով վերը շարադրված վերլուծությունը և այն հանգամանքը, որ Սահմանադրության 14-րդ հոդվածում (2-րդ մաս) առկա իրավակարգավորմամբ որևէ անդրադարձ չի կատարվել ժողովրդավարական վերահսկողությանը (շեշտադրված են քաղաքական չեզոքության և քաղաքացիական վերահսկողության սկզբունքները, այն էլ՝ բացառապես զինված ուժերի նկատմամբ)՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է Սահմանադրության վկայակոչված հոդվածում, բացի զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության սկզբունքից, ամրագրել նաև ժողովրդավարական վերահսկողության սկզբունքը՝ այն նախատեսելով ոչ միայն զինված ուժերի, այլև ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմինների համար:

¹ Տե՛ս, H. Born, A. Wills *Overseeing Intelligence Services*, published by DCAF, Geneva, 2012, էջ 9:
² Տե՛ս Соломатина Е.А. Теоретико-правовые основы контроля законодательной власти за деятельностью правоохранительных органов (Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук). М., 2004, էջ 127 (https://new-disser.ru/product_info.php?products_id=952944):
³ Տե՛ս, օրինակ՝ Հ. Բյորն, Է. Ուիլս Հետախուզական ծառայությունների վերահսկողություն, Երևան, «Ասողիկ», 2012, էջ 41:
⁴ Տե՛ս, օրինակ՝ Рыжак Н.И. Контроль законодательной власти за деятельностью спецслужб (теоретико-правовые вопросы исследования) (Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук). М., 1998, С. 4 (http://new-disser.ru/product_info.php?products_id=953896), American Intelligence and Congressional Oversight. Proposed Remarks by Robert M. Gates Before The World Affairs Council. – In: *Legislative Oversight of Intelligence Activities: The U.S. Experience*. Report Prepared by The Select Committee on Intelligence of The United States Senate. Wash., Oct. 1994, էջ 139):
⁵ Օրինակ՝ Գերմանիայի Բունդեսբազի «G-10» հանձնաժողովը թույլտվություն է տալիս հետախուզական ծառայություններին գաղտնալսելու անձի հեռախոսային խոսակցությունները (տե՛ս, Հ. Բյորն, Է. Ուիլս նշվ. աշխ., էջ 38): ԱՄՆ կոնգրեսի ինչպես ստորին, այնպես էլ վերին պալատներում պաշտպանության և անվտանգության հարցերով ստեղծված մշտական հանձնաժողովները օժտված են ոչ միայն ընթացիկ և հետագա վերահսկողական լիազորություններով, այլև ունեն նախնական վերահսկողական որոշ լիազորություններ, ինչը արտահայտվում է առանձին հատուկ գործողություններ իրականացնելու համար անվտանգության ծառայություններին նախնական համաձայնություններ տալով (տե՛ս, Соломатина Е.А. նշվ. աշխ., էջ 135):
⁶ Տե՛ս, օրինակ՝ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/144010>, <http://www.hra.am/hy/tag/army>, <http://armlur.am/358062/>, <http://iravaban.net/126922.html>:
⁷ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ, 2014, էջեր 28-33, 46:

⁸ Ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀ ՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ.1118:

⁹ Ընդունվել է 05.07.1995թ., ուժի մեջ է մտել 13.07.1995թ. (<http://www.arlis.am>):

¹⁰ Տե՛ս, European Commission for Democracy Through Law (Venice Commission) Report on the democratic control of the armed forces, adopted by the Venice Commission at its 74th Plenary Session (Venice, 14-15 March 2008) էջ»с 36-38 ([http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2008\)004-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2008)004-e)):

¹¹ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի (1-ին մաս) համաձայն. «Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություններ կայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը»:

¹² ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի (4-րդ մաս) համաձայն. «Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի լիազորություններ կարող է իրականացնել միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով»:

¹³ Ի համեմատ մյուս ոլորտների՝ պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողով ձևավորելու համար ավելի բարձր շեմ նախատեսված է մաս Հունաստանում, Իտալիայում, Գերմանիայում, Խորվաթիայում, Լեհաստանում, Սլովենիայում, Չեխիայում, Ավստրիայում, Նիդերլանդներում, Մակեդոնիայում: Մասնավորապես, ըստ Հունաստանի սահմանադրության 68-րդ հոդվածի (2-րդ մաս)՝ խորհրդարանը պատգամավորների ընդհանուր թվի մեկ հինգերորդի առաջարկությամբ իր անդամների կազմից հետաքննություն իրականացնելու համար ձևավորում է հանձնաժողով, որի վերաբերյալ որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի երկու հինգերորդով: Ներքին քաղաքականության և ազգային պաշտպանության հարցերով հետաքննություն իրականացնելու նպատակով հանձնաժողովներ կազմավորելու վերաբերյալ որոշումը խորհրդարանը պետք է կայացնի պատգամավորների ընդհանուր թվի ձայների բացարձակ մեծամասնությամբ (տե՛ս օրինակ՝ <http://worldconstitutions.ru/?p=153>):

¹⁴ Տե՛ս, օրինակ՝ Գերմանիայի սահմանադրության 44-րդ հոդված (<http://worldconstitutions.ru/?p=155&page=2>) և «Գերմանիայի Բունդեսթագի քննիչ հանձնաժողովների իրավունքի կարգավորման մասին» օրենք (ընդունվել է 19.06.2001թ.) (տե՛ս <https://www.gesetze-im-internet.de/puag/BJNR114210001.html>):

¹⁵ Տե՛ս, օրինակ՝ Law on parliamentary oversight in the area of security and defence, SU-SK Number 01-879/11, Podgorica, 22 December 2010 (<http://institut-alternativa.org/zakon-o-parlamentarnom-nadzoru-u-oblasti-bezbjednosti-i-odbrane-druga-godina-primjene/?lang=en>), The parliamentary control of intelligence and security services act, Ljubljana, 26 February 2003, Official Gazette of the RS, N 26/03 – ZPNOVS (http://www.ipu.org/parline-e/reports/instance/2_107.htm):

Հատկանշական է, որ նախկին Խորհրդային Միության հանրապետություններից միայն Ուկրաինայում է գործում պաշտպանության և անվտանգության ոլորտների նկատմամբ խորհրդարանական վերահսկողությանը վերաբերող առանձին օրենք (տե՛ս Law of Ukraine On Democratic Civilian Control of State Military Organisation and Law Enforcement Bodies, 975-IV, 19.06.2003; Bulletin of the Verkhovna Rada, 2003, No 46, C. 366.

(<http://www.dcaf.ch/Publications/The-Security-Sector-Legislation-of-Ukraine>), թեև դեռևս 2001 թվականին ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունվել է «Պետության ռազմական կառույցների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մասին» մոդելային օրենքը (տե՛ս Модельный закон “О парламентском контроле над военной организацией государства”, Принят в г. Санкт-Петербурге 24.11.2001 Постановлением 18-13 на 18-ом пленарном заседании Межпарламентской Ассамблеи государств - участников СНГ (<https://www.lawmix.ru/abro/3447>):

¹⁶ Տե՛ս, օրինակ՝ <http://armlur.am/38597/>, <http://www.alplus.am/1328289.html>:

Այս առումով ուշագրավ է Չեխիայի օրինակը, որտեղ հատուկ ծառայությունների գործունեությունը վերահսկելու նպատակով 1992 թվականին ստեղծված խորհրդարանական հանձնաժողովը բացահայտեց նշված ծառայությունների կողմից ընդդիմադիր քաղաքական գործիչների հեռախոսային խոսակցությունները զարտնալսելու անհիմն և անօրինական մի շարք դեպքեր: Բացի այդ, այս հանձնաժողովի կողմից վեր հանվեցին հատուկ ծառայությունների և կազմակերպված հանցավոր խմբավորումների միջև ձևավորված կապերը (տե՛ս Соломатина Е.А. նշվ. աշխ., էջ 136):

¹⁷ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի (2-րդ մաս) համաձայն. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են»:

¹⁸ Այս առումով հատկանշական է, որ դեռևս «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի (ընդունվել է 23.08.1990թ., ուժի մեջ է մտել 23.08.1990թ., ՀՀԳ՝ S 1990/16, տե՛ս <http://www.arlis.am>) 9-րդ հոդվածում ամրագրված էր ոչ միայն զինված ուժերի, այլև իրավապահ մարմինների ապաքաղաքականացման հիմնադրույթը:

¹⁹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ? Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 131-132:

²⁰ Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի (3-րդ մաս) ուժով? ի թիվս այլ մարմինների ծառայողների կարող են սահմանափակվել մաս զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացումը: «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.04.2011թ., ուժի մեջ է մտել 02.05.2011թ., ՀՀՊՏ 2011.04.22/23(826) Հոդ.452) 8-րդ հոդվածի համաձայն. «Սահմանադրական դատարանի անդամներն ու

դատավորները, ինչպես նաև զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում, քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայության ծառայողները հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն և զսպվածություն ցուցաբերեն»:

²¹ Ընդունվել է 25.05.2016թ., ուժի մեջ է մտել 01.06.2016թ., ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) Հոդ.456:

²² Տե՛ս օրինակ՝ Willem F. van Ekelén, Philipp H. Fluri Defence Institution Building, A Sourcebook in Support of the Partnership Action Plan (PAP-DIB), Vienna and Geneva, September 2006, էջեր 89-117, W. Van Eekelen, ‘Democratic Control of Armed Forces: The National and International Parliamentary Dimension’, in H. Born, P. Fluri, and S. Lunn (eds.), Oversight and Guidance: The Relevance of Parliamentary Oversight for the Security Sector and its Reform, DCAF Document No. 4, 2003, Демократический контроль над военной сферой в России и странах СНГ./Под редакцией А.И. Никитина.-М., Изд-во «Эслан», 2002, էջ»с 80-106:

²³ Տե՛ս, օրինակ՝ Լեհաստանի սահմանադրության 26-րդ հոդված (<http://worldconstitutions.ru/?p=112>):

²⁴ Տե՛ս, Goodpaster A.J., Huntington S.P. Civil-military Relations (American Enterprise Institute for Public Policy Research, Washington, D.C., 1977), էջ 31:

²⁵ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 132:

²⁶ Տե՛ս, Huntington S.P. The Soldier and the State: The Theory and Politics of Civil-Military Relations. Harvard University Press, 1957, C. 72 (<http://www.hup.harvard.edu/catalog.php?isbn=9780674817364>):

²⁷ Տե՛ս, Clemmensen J.R. Beyond ‘The Soldier and the State’ -The Theoretical Framework of Elite Civil-Military Relations, Dissertation submitted to the Department of International Relations at the London School of Economics and Political Science for the Degree of Doctor of Philosophy, London, August 2013, էջեր 120-145 (<http://etheses.lse.ac.uk>):

²⁸ Տե՛ս, European Commission for Democracy Through Law (Venice Commission) Report on the democratic control of the armed forces, adopted by the Venice Commission at its 74th Plenary Session (Venice, 14-15 March 2008) էջ»с 14, 32-33 ([http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2008\)004-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2008)004-e)):

Օրինակ՝ նշված զեկույցում պաշտպանության նախարարության տարանջատումը զինված ուժերի գլխավոր շտաբից կամ պաշտպանական համակարգում քաղաքացիական անձնակազմի թվաքանակի մեծացումը դիտարկվում են որպես քաղաքացիական վերահսկողության եղանակներ:

²⁹ Մանրամասն տե՛ս, Marie Vlachova Democratic Control of Armed Forces. Armed Forces and International Security: Global Trends and Issues. Ed. by Jean Callaghan and Franz Kernic. LIT Verlag, 2004, էջեր 200-208:

³⁰ Տե՛ս Հարությունյան Ա.Ռ. ՀՀ պաշտպանական համակարգը և զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը խորհրդարանական կառավարման պայմաններում, Հայկական բանակ, 2(88). 2016, էջ 34 (<http://www.mil.am/media/2016/09/11914.pdf>):

³¹ Տե՛ս, <https://legalns.com/download/books/cons/croatia.pdf>:

³² Տե՛ս, <http://worldconstitutions.ru/?p=112>:

³³ Տե՛ս, <http://worldconstitutions.ru/?p=141&page=10>:

³⁴ Ընդունվել է 27.11.2008թ., ուժի մեջ է մտել 25.12.2008թ., ՀՀՊՏ 2008.12.24/73(663) Հոդ.1319:

³⁵ Ընդունվել է 07.02.2007թ., ուժի մեջ է մտել 25.02.2007թ., ՀՀՊՏ 2007.02.15/11(535) Հոդ.228:

³⁶ Ընդունվել է 25.12.2007թ., ուժի մեջ է մտել 08.01.2008թ., ՀՀՊՏ 2008.01.07/1(591) Հոդ.14:

³⁷ Տե՛ս, <http://www.nato.mfa.am/hv/actionplan/>:

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. «Հայաստանի անկախության մասին» հռչակագիր (ընդունվել է 23.08.1990թ., ուժի մեջ է մտել 23.08.1990թ., ՀՀԳ Տ 1990/16 (<http://www.arlis.am>),
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն (ընդունվել է 05.07.1995թ., ուժի մեջ է մտել 13.07.1995թ. (<http://www.arlis.am>),
3. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխություններ (ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ.1118),
4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ, 2014,
5. Գերմանիայի Հանրապետության սահմանադրություն (ընդունվել է 23.05.1949թ.) (<http://worldconstitutions.ru/?p=155>),
6. որվաթիայի Հանրապետության սահմանադրություն (ընդունվել է 22.12.1990թ.) (<https://legalns.com/download/books/cons/croatia.pdf>),
7. Հունաստանի Հանրապետության սահմանադրություն (ընդունվել է 11.06.1975թ.) (<http://worldconstitutions.ru/?p=153>),
8. Լեհաստանի Հանրապետության սահմանադրություն (ընդունվել է 02.04.1997թ.) (<http://worldconstitutions.ru/?p=112>),
9. Պորտուգալիայի Հանրապետության սահմանադրություն (ընդունվել է 02.04.1976թ.) (<http://worldconstitutions.ru/?p=141>),
10. Հայաստան-ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների (2014-2016թթ.)» ծրագիր

(<http://www.nato.mfa.am/hy/actionplan>),

11. «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.04.2011թ., ուժի մեջ է մտել 02.05.2011թ., ՀՀՊՏ 2011.04.22/23(826) Հոդ.452),
12. ՀՀ ընտրական օրենսգիրք (սահմանադրական օրենք) (ընդունվել է 25.05.2016թ., ուժի մեջ է մտել 01.06.2016թ., ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) Հոդ.456),
13. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 27.11.2008թ., ուժի մեջ է մտել 25.12.2008թ., ՀՀՊՏ 2008.12.24/73(663) Հոդ.1319),
14. ՀՀ նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագր (ընդունվել է 07.02.2007թ., ուժի մեջ է մտել 25.02.2007թ., ՀՀՊՏ 2007.02.15/11(535) Հոդ.228),
15. ՀՀ նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» ՆՀ-308-Ն հրամանագր (ընդունվել է 25.12.2007թ., ուժի մեջ է մտել 08.01.2008թ., ՀՀՊՏ 2008.01.07/1(591) Հոդ.14),
16. «Գերմանիայի Բունդեսբադի քննիչ հանձնաժողովների իրավունքի կարգավորման մասին» օրենք (ընդունվել է 19.06.2001թ.) (<https://www.gesetze-im-internet.de/puag/BJNR114210001.html>),
17. Модельный закон “О парламентском контроле над военной организацией государства”, Принят в г. Санкт-Петербурге 24.11.2001 Постановлением 18-13 на 18-ом пленарном заседании Межпарламентской Ассамблеи государств - участников СНГ (<https://www.lawmix.ru/abro/3447>),
18. Law on parliamentary oversight in the area of security and defence, SU-SK Number 01-879/11, Podgorica, 22 December 2010,
19. Law of Ukraine On Democratic Civilian Control of State Military Organisation and Law Enforcement Bodies, 975-IV, 19.06.2003; Bulletin of the Verkhovna Rada, 2003, No 46, (<http://www.dcaf.ch/Publications/The-Security-Sector-Legislation-of-Ukraine>),
20. The parliamentary control of intelligence and security services act, Ljubljana, 26 February 2003, Official Gazette of the RS, ? 26/03 – ZPNOVS (http://www.ipu.org/parline-e/reports/instance/2_107.htm),
21. Հայաստանի Հանրապետության Սահմանդրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010,
22. Հարությունյան Ա.Ռ. ՀՀ պաշտպանական համակարգը և զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը խորհրդարանական կառավարման պայմաններում, Հայկական բանակ, 2(88). 2016, (<http://www.mil.am/media/2016/09/11914.pdf>),
23. Հ. Բյորն, Է. Ուիլս Հետախուզական ծառայությունների վերահսկողություն, Երևան, «Աստղիկ», 2012,
24. Демократический контроль над военной сферой в России и странах СНГ./Под редакцией А.И. Никитина.-М., Изд-во «Эслан», 2002,
25. Соломатина Е.А. Теоретико-правовые основы контроля законодательной власти за деятельностью правоохранительных органов (Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук). М., 2004 (https://new-disser.ru/product_info.php?products_id=952944),
26. Рыжак Н.И. онтроль законодательной власти за деятельностью спецслужб (теоретико-правовые вопросы исследования) (Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук). М., 1998 (http://new-disser.ru/product_info.php?products_id=953896),
27. American Intelligence and Congressional Oversight. Proposed Remarks by Robert M. Gates Before The World Affairs Council. – In: Legislative Oversight of Intelligence Activities: The U.S. Experience. Report Prepared by The Select Committee on Intelligence of The United States Senate. Wash., Oct. 1994),
28. Clemmensen J.R. Beyond ‘The Soldier and the State’ -The Theoretical Framework of Elite Civil-Military Relations, Dissertation submitted to the Department of International Relations at the London School of Economics and Political Science for the Degree of Doctor of Philosophy, London, August 2013 (<http://etheses.lse.ac.uk>),
29. Goodpaster A.J., Huntington S.P. Civil-military Relations (American Enterprise Institute for Public Policy Research, Washington, D.C., 1977),
30. European Commission for Democracy Through Law (Venice Commission) Report on the democratic control of the armed forces, adopted by the Venice Commission at its 74th Plenary Session (Venice, 14-15 March 2008),
31. H. Born, A. Wills Overseeing Intelligence Services, published by DCAF, Geneva, 2012,
32. Huntington S.P. The Soldier and the State: The Theory and Politics of Civil–Military Relations. Harvard University Press, 1957,
33. Marie Vlachova Democratic Control of Armed Forces. Armed Forces and International Security: Global Trends and Issues. Ed. by Jean Callaghan and Franz Kernic. LIT Verlag, 2004,
34. Willem F. van Ekelén, Philipp H. Fluri Defence Institution Building, A Sourcebook in Support of the Partnership Action Plan (PAP-DIB), Vienna and Geneva, September 2006,
35. W. Van Ekelén, ‘Democratic Control of Armed Forces: The National and International Parliamentary Dimension’, in H. Born, P. Fluri, and S. Lunn (eds.), Oversight and Guidance: The Relevance of Parliamentary Oversight for the Security Sector and its Reform, DCAF Document No. 4, 2003:

Тигран Нагдалян

Аспирант кафедры конституционного права юридического факультета Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

Некоторые аспекты совершенствования конституционно-правовых основ полномочий Национального Собрания РА контроля в секторах обороны и безопасности

В статье в свете исследования международного опыта представлен ряд актуальных вопросов, касающихся парламентского контроля в секторах обороны и безопасности. В частности, внимание уделено совершенствованию законодательных положений в сфере деятельности следственной комиссии в этих областях и рассмотрению докладов данных комиссий, а так же вопросам, связанным с гражданским и демократическим контролем над вооруженными силами и службами безопасности.

На основе анализа данных вопросов, обосновывается необходимость внесения ряда изменений и дополнений как в Конституцию РА, так и в конституционный закон РА “Регламент Национального Собрания”.

Ключевые слова – сектора обороны и безопасности, парламентский контроль, доклад следственной комиссии, принцип политического нейтралитета, демократический и гражданский контроль.

Tigran Naghdalyan

PhD student of the Chair of Constitutional Law of the faculty of law of the Yerevan State University

SUMMARY

Some issues on improvement of the constitutional-legal basis of the RA National Assembly oversight powers in defence and security sectors

In the light of the international best practices the article presents number of topical issues regarding parliamentary oversight in defence and security sectors. In particular, the discussion is focused on the improvement of legislative regulations on the activities of the inquiry committees established in the mentioned sectors and debates over these committees reports, as well as on the issues regarding the civilian and democratic oversight over the armed forces and security services.

Based on the implemented analysis and in connection to the issues presented above, legal reasoning is provided over necessity of making a number of changes and amendments in the RA Constitution, as well as in the RA Constitutional law on the “Rules of Procedure of the National Assembly”.

Keywords - defence and security sector, parliamentary oversight, report of the inquiry committee, principle of political neutrality, democratic and civilian oversight.